Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1076[1]-19.01.2011-ՏՏ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ օրենք) 6-րդ հոդվածի երկրորդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Համայնքները, դրանց վարչական սահմանների նկարագրությունը եւ սահմանների նկարագրության փոփոխությունները սահմանվում են օրենքով:» :

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածի՝

1. առաջին մասի 27-րդ եւ 28-րդ կետերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«27) որոշում է ընդունում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաեւ նախագծման առաջադրանքները հաստատելու մասին՝ «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.

28) հաստատում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, ինչպես նաեւ սույն օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված քաղաքաշինական այն փաստաթղթերը, որոնց պատվիրատուն է համայնքը. » .

2. առաջին մասը լրացնել նոր 28.1-րդ կետով հետեւյալ բովանդակությամբ.

«28.1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում եւ կարգով որոշում է ընդունում համայնքի հողերի օգտագործման սխեմաները հաստատելու մասին: »

Հոդված 3. Օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասը լրացնել նոր 12.1-րդ կետով, հետեւյալ բովանդակությամբ.

«12.1) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան համայնքի քաղաքաշինական ծրագրային եւ հողաշինարարական փաստաթղթերը եւ/կամ դրանց փոփոխությունները, ինչպես նաեւ նախագծման առաջադրանքները հաստատելու մասին որոշում ընդունելու վերաբերյալ.» :

Հոդված 4. Օրենքի 37-րդ հոդվածի `

1. առաջին մասի 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանած կարգով կազմում է համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը՝ համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը եւ քաղաքաշինական գոտիավորման նախագիծը եւ/կամ դրանց փոփոխություններն ու նախագծման առաջադրանքները:

Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի եւ/կամ դրանց փոփոխությունների, ինչպես նաեւ նախագծման առաջադրանքների նախագծերը «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքի պահանջներին համապատասխան՝ կառավարության սահմանված կարգով ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը:».

2. առաջին մասը լրացնել նոր՝ 1.1-րդ կետով, հետեւյալ բովանդակությամբ.

«1.1) սույն օրենքի 46-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան կազմում եւ վարում է համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզը (այսուհետ՝ ընթացիկ քարտեզ),

3. առաջին մասի 3-րդ եւ 4-րդ կետերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3) համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կառուցապատողներին տալիս է ճարտարապետահատակագծային առաջադրանք (կամ նախագծման թույլտվություն), որում ներառվում են իր կողմից ինժեներական սպասարկում իրականացնող ծառայություններին ներկայացված հարցման հիման վրա ստացված՝ օբյեկտի նախագծման տեխնիկական պայմանները:

Մեկից ավելի համայնքների տարածքներ ընդգրկող՝ հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունեցող ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների կառուցման նպատակով եւ հատուկ նշանակության հողերում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը (կառուցապատման ընթացակարգերը) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4) սահմանված դեպքերում եւ կարգով համայնքի բնակչությանը իրազեկում է միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին.» :

4. առաջին մասը լրացնել 4.1-րդ կետով, հետեւյալ բովանդակությամբ.

«4.1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համաձայնեցնում է ճարտարապետաշինարարական նախագծերը, տալիս շինարարության (քանդման) թույլտվություն, միջոցառումներ է ձեռնարկում շինարարության թույլտվությամբ նախատեսված ժամկետներում կառուցապատումն ավարտելու համար.» .

5. առաջին մասը լրացնել 7.1-րդ կետով, հետեւյալ բովանդակությամբ.

«7.1) մշակում եւ կազմում է համայնքի սեփականություն համարվող շենքերի ու շինությունների օտարման ամենամյա եւ քառամյա ծրագրերը, որոնք կազմում են համայնքի քառամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ մասը եւ դրանք ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը.» :

Հոդված 5. Օրենքի 38-րդ հոդվածի՝

1. առաջին մասի 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանած դեպքերում եւ կարգով կազմում է համայնքների հողերի օգտագործման սխեմաները ու ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը.».

2. առաջին մասը լրացնել նոր 1.1-րդ կետով, հետեւյալ բովանդակությամբ.

«1.1) մշակում եւ կազմում է համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման ամենամյա եւ քառամյա ծրագրերը, որոնք կազմում են համայնքի քառամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ մասը եւ դրանք ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը.» .

3. առաջին մասի 2-րդ կետի եւ երկրորդ մասի 2-րդ կետի «հողերի գոտիավորման եւ օգտագործման սխեմաներին, գոտիավորման այլ փաստաթղթերին, քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին»

բառերը փոխարինել «քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, հողերի օգտագործման սխեմաներին» բառերով:

Հոդված 6. Օրենքի 46-րդ հոդվածը լրացնել նոր, չորրորդ մասով, հետեւյալ բովանդակությամբ.

«Գույքագրման փաստաթղթերին կցվում է համայնքի ընթացիկ քարտեզի սահմանված կարգով հաստատված պատճենը, որում արտացոլվում են սահմանված կարգով տրամադրված հողամասերը (նպատակային կամ գործառական փոփոխության մասին նշումով), նախագծման եւ շինարարության թույլտվությունները, ինչպես նաեւ գլխավոր հատակագծի եւ գոտիավորման նախագծի փոփոխությունները: Ընթացիկ քարտեզի սահմանված կարգով հաստատված պատճենը կցվում է համայնքի ամենամյա պարտադիր գույքագրման փաստաթղթերին, որը ներկայացվում է ավագանու հաստատմանը: Ընթացիկ քարտեզի փոփոխությունները կատարվում են գույքագրման փաստաթղթերի համար սույն հոդվածով սահմանված պահանջներին համապատասխան:»:

Հոդված 7. Օրենքի 51-րդ հոդվածի առաջին մասում «օտարվել» բառից հետո լրացնել «համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով ու» բառերը, իսկ «գոտիավորման եւ» բառերը հանել:

Հոդված 8. Օրենքի 53-րդ հոդվածի առաջին մասից հետո լրացնել նոր պարբերություն, հետեւյալ բովանդակությամբ.

«Համայնքի քառամյա զարգացման ծրագրում պարտադիր կարգով ներառվում են համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ:» :

Հոդված 9. Օրենքի 84-րդ հոդվածի՝

3-րդ մասը «հողերի իրացումից,» բառերից հետո շարադրել «, ինչպես նաեւ հողերի նպատակային նշանակության (կատեգորիայի) փոփոխությունների հետեւանքով առաջացած ֆինանսական միջոցներն ամբողջ ծավալով ուղղվում են համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակմանը: Նշված պահանջը չկատարելու դեպքում պետության կողմից պաշտոնական տրանսֆերտների ձեւով համայնքին տրամադրվող հատկացումները կասեցվում են՝ մինչեւ համայնքների քաղաքաշինական փաստաթղթերի սահմանված կարգով հաստատումը:» խմբագրությամբ.

հոդվածը լրացնել նոր 8.1-րդ եւ 8.2-րդ մասերով, հետեւյալ բովանդակությամբ.

«8.1. Համայնքի ավագանու հավանությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված գլխավոր հատակագծերը համարվում են հաստատված համայնքի ավագանու կողմից:

8.2. 2016 թ. հունվարի 1-ից հետո առանց սահմանված կարգով հաստատված համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի՝ կառուցապատման նպատակներով հողամասերի եւ/կամ ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրումն արգելվում է:»:

Հոդված 10. Սույն օրենքի ընդունումը պետության համար չի առաջացնում «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված փոխհատուցման պարտավորություն:

Հոդված 11. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկությունների

Առարկության, առաջարկության հեղինակը,	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
ՀՀ կառավարություն	«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան լրացում, համաձայն որի քաղաքաշինական փաստաթղթերի մշակմանը մասնակցած նախագծային կազմակերպությունները կամ անձինք չեն կարող կատարել կամ ներգրավվել իրենց կողմից մշակված նախագծերի փորձաքննությանը:	Ընդունվել է	«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածը լրացվել է 5-րդ մասով:
ՀՀ կառավարություն	«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան լրացում, համաձայն որի ՀՀ կառավարության սահմանած տեխնիկապես ոչ բարդ օբյեկտների շինարարության որակի տեխնիկական հսկողությունը, կառուցապատողի և շինարարություն իրականացնողի համաձայնությամբ կարող է փոխարինվել շինարարական աշխատանքների պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրով:	Ընդունվել է	«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածը լրացվել է 6-րդ մասով:
	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ՝ հաշվի առնելով, որ քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության, շինարարության իրականացման և շինարարության որակի տեխնիկական հսկողության գործունեությունների լիցենզավորման կարգերում կատարված փոփոխությունների համաձայն նշված	Ընդունվել է	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի «16. Քաղաքաշինության բնագավառ» բաժնում կատարվել են համապատասխան

	գործունեությունների իրականացման համար լիցենզավորվող անձանց լիցենզիաների հետ տրամադրվելու են համապատասխան ներդիրներ՝ ըստ ոլորտների:		փոփոխություններ:
ՀՀ ԱԺ պատգամավոր Արայիկ Հովհաննիսյան	«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 7-րդ հոդվածի առաջին մասի 3) ենթակետը հանել:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ: